

ԻՐԱՎՈՒՆԿ

ԻՐԱՎՈՒՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔԵԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

Rev Pere G Kalemkarian M. chitarist ngasse
Nº 4 Vienne

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ	Համակ դրամ եռայն դրկի հետեւեալ հասցեով ԽՐԱՎՈՒՐՈՒԹԻՒՆ «ԻՐԱՎՈՒՆԿ» ԼՐԱԴՐՈՅ. — ՎԱՌՆԱ (Պուլկարիա)	Խմբագրութեան ուղղեալ գրութիւնք էս լին դրկուիր եւ յարմար դասաւոր- ւերը միայն կը հրատարակուին աւ- րոյշովին կամ մասամբ:
Պոլիարիոյ համար Տարեկան 12 փր.	Редация на вѣстникѣ	Խանութեան տղը 20 սանթիմ. երե- ֆեկ աւելի անգամներու համար 20 0/0 զեղչ կը շինի:
» վեցամսեայ 6 փր.	„И р а в у н к ъ“	
Առատահմանի համար (երկու փոքր մէկ ծրարով) Տարեկան 14, վեցամսեայ 7 փր.	ВАРНА (България)	
ԿԱՆԽԻՎ ՎՃԱՐՆԵԼԻ	V A R N A (Bulgarie)	

ԿԸՆԴՐԻՆ ԱԶԳԵՑՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ ԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՈՐԾԵՐՈՒՆ ՄԵԶ

Գ.

Քառասուն տարիներու չափ առաջ վարագի բարձունքէն զօրեղ ձայն մը կը թնդացնէր հայ ժողովրդին սիրտը: Այդ ձայնը մէկ կողմէն աղեկէզ խաղերով հայրենի աւերակները կողբար ու միւս կողմէն հայ-ընկերութեան պատկառնող օրէնքներուն բարեփոխման պէտքը կը յուշէր խուլ կերպով: Բացառանշուն խաղ երանելի ժամանակներուն մէջ իրեն կը ձգէր թէ ամեն անոնք, որ մէկ աւելին և երկու փոխին հոգի կուտային և թէ անոնք, որ քիչ շատ լուրջ մտքով կը հետեւէին բացառանշող բայց միեւնոյն ատեն խորհրդածող այդ ըմբոստ ձայնին աւան մէկ ելեւէջին:

Ըսել է խորմեան վարդապետ — վասն զի իրեն էր այդ ձայնը — օրուան մարդն էր ան ատեն թէ իրեն հոգիները մարդոց ուղիւրդուն և թէ իրեն վեղարաւոր բողոքող հինին դէմ, կռնակը ժողովրդին տուած, ճակատ կը պարզէր սքեմաւորներու խուլ պայքարին, որ երթալով կարեւոր ծաւալ կը տանար վարագէ մինչև Մասիս ու արարատ աշխարհ: Ժողովուրդին աչքին բարենորոգիչ այդ տրեխաւոր հրեշտակը եկեղեցական ներու համար դեռ չէր, բայց լեկեայն դատապարտուած հերձուածող մըն էր, որ յայտնի դեմ ուարձութիւններու առջեւ կը զբոսնէր ինքզինք, երբ կարծեմ իր եղբայրակցին լերեմիա վարդապետին հետ եպիսկոպոսանալու համար կը ներկայանար մեր ամենէն պահպանողական եկեղեցականին Գեորգ կաթողիկոսին:

Բայց այսպէս թէ այնպէս խորմեան վարդապետ կ'եպիսկոպոսանար. ու յետոյ... յետոյ իր ժողովրդականութեան թափով կը լալողէր անցնի վարագալ լեռնէն կամ Մշոյ սարէն Պատրիարքական դարեանդը, ուր պէտք եղածին չափ ընդարձակ ասպարէզ կը գտնէր իր առջեւ գէթ մասամբ զօրծաղիւր համար բարենորոգչի այն ծրագիրները, սրտք կայրէին

ու կը մրկէին զինք, երբոր ինք տէրտէր կամ վարդապետ պէտքը կը զգար Պատենի պէս լուրջ ու պատական մտքերն անգամ իրեն յանկուցանելու:

Այս, խորմեան վարդապետ երկու ճիւղ կը մշակէր. մէկը մինչև հիմա իրեն է արդէն, սրտք մարկելու, հոգիներ փոփոքելու գաղտնիքը, իսկ միւսը հայ-ընկերութեան ներքին հիւանդութիւններուն դարմանը, Պատրիարք կը ըլլար ու շատ լաւ կը պաշտպանէր իր առաջին քեզը, իսկ երկրորդին համար ամեն անգամ որ դատաստանական խորհրդոյ յաւիտենական մէկ անդամին Մ. Հ. ի մտերմական քննադատութիւնները կը լսէր տիրող օրէնքներու անպայման կաշկանդումներուն դէմ, «ախ եթէ կաթողիկոս ըլլա՞մ, որ արարատ խոսքով հեռաւոր ապագայի մը կը թողնուր գործը ու ատրոպէն հիւսկածափման կենթարկէր խորմեան վարդապետին համակրող բոլոր լրջամիտ ու ազատական տարրերը:

Այնք բիւրն մարդն էր. ժողովուրդին, խառնին մարդն էր. խոսքի մարդն էր, որ հմայքով կը վարէր ընդհանուր հայութիւնը ծայրէ ծայր և հայաստանի այդ հրեշտակը Մովսէս աւելի հրաշագործ իր գաւազանով ուղած առան քաղաքած աչքերէ արցունք կը հանէր և ուղած առան անպատու ինքուով կը վառէր զանոնք: Ինք իր տարրէն դուրս, շատ ընդարձակ տիրուպետութիւն մը կը ունենար և սակայն այդ ահագին տիրուպետութեան մէջ իսկ մատին ծայրով չէր դպչեր ընկերային բարդ խնդիրներու, զորոնք կը նետէր կաթողիկոսի իրաւանց սահմանին մէջ դառն ու պղտատնական հաւանքով մը:

Չ'երկարենք. խորմեան կաթողիկոս կը ըլլար. վահագանի գրասեղանին վրայ ամեն ժամանակէ աւելի գիշուած կը գտնէր ընդհանուր ազգային նմոյշները այլ և այլ երանգներու առկա, Գանգատագրեր, աղբիւսագրեր ի հարկէ բըլբակ մը կը շինէին և իրաւունք կուտային իրեն բարենորոգչի մեծ ու վճռական քայլը առնելու, բայց աւելի, որ ինք ալ իր նախորդներուն պէս հայրտանանայ հայրտապետութիւն հաւանք օրէնքներուն կը կառչէր, կը մնար և շատ ան-

նշան շեղումներով կը նուիրագործէր տիրող կարգն ու սարքը գրեթէ առանց պայմանի:

Ու այսպէս քառասուն տարիներ առաջ վարագէն որոտացող դուռնը քառասուն տարի վերջ Մասիսի ստորոտը կը լսէր և այլապէս իր աչքան բեղմնաւոր կեանքը չէր տիրողստուրէր նաեւ Միւս բարենորոգչի անունով:

(Շարունակելի)

ԿՈՎԿԱՍՏԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Կովկասեան թղթակցութիւնէ մը հետեւեալը կը քաղենք.

Ախալքալաքի կողմերը եղած սոսկալի երկրաշարժի մասին անշուշտ հեռագիրն ու լրագրները ձեզ հաղորդած պիտի լինին: Ժողովրդի կրեց նորայ միտաները. 6-7ը նոյնից գրեթէ լիովին յիմնադրուեցին. հազարաւոր բռնակիչներ, այս խոտաշունչ ձմրան, մնացին բացօթեայ. մինչև այժմ փրատակները տակից հանել են 800ի չափ դիակներ:

Լրագրներին նկարագրութիւնները սարսափեցուցիչ են: Յիշումներ մինչև այժմ շարունակուած են այդ կողմերում: Կովկասեան վարչութիւնը, ժողովուրդն ամբողջ միացած՝ շտապում են օգնութիւն հասցնել զժաղիւրդին: ամեն լրագիր հանգանակութիւն է բաց արել. վելիչկոն իսկ պահ մը մոռցած իր ատելութիւնն առ հայերը, սրտաշարժ խոսքերով օգնութեան է կանչում յօգուտ թշուառացած հայերի: Թիֆլիս Լիւտովի ուսում թերթը, որի խմբագիրը Հայ է, հանգանակութիւնը մինչև այսօր հասցրել է 41,000 բուլբուլ, մի ուսաստայ թերթ միայն 1500, իսկ վելիչկոն «Կովկաս»ը 2000 բ. Թաւաղաւոր կայսրը նոյնից է 50,000 բ. Մ. Հայրապետը՝ 1000. Բանկալին վարչութիւնները խոշոր գումարներ են ազգային երկրաւոր շիջ միաստաններին օգնելու համար յատկապէս կազմուած յանձնաժողովին: ամեն տեղ շարունակ է նպատակներ զուտորը: ամեն

(*) վերջին բողոքին լուր հասաւ որ մի նոր մեծ ցնցում փրատակ է գարծրել 30 տուն հաս:

Հայ թեմակալ առաջնորդ, վիճակաւոր փոխանորդ բաց է արեհանգանակութիւն:

Այսպիսի տխուր լուրերից յետոյ հաղորդեմ ձեզ մի ուրախաւիթ դէպք: Երէկ «Կովկաս» թերթի մէջ կարդացի հետեւեալ պաշտօնական յայտարարութիւնը: «Կովկասի կառավարչապետը օգտակար գտաւ հեռացնել Պ. վելիչկոնի իր պաշտօնից»:

Այսպէս ուրեմն, վերջապէս, Կովկաս ազատուեց այն աղտոտ մարդոց, որ տարիներից ի վեր ջանք չէր խնայում ազգերը իրար դէմ կռուցնելու և մանաւանդ հայերին կեղտոտելու համար: Հազու թէ Գալիցիան ինքնաւարտաբար վաճառեց իր վելիչկոնին: Ամեն բան ցոյց է տալիս, որ բարձրագոյն տեղից հրահանգ է եկած այդ մասին: Առ հասարակ վերջերս, նկատելի կերպով, Պետութեան յարաբերութիւնները փոխուած են դէպի հայերը: Ըստ երեւոյթին, մայրաքաղաքում սկըսեցին ըմբռնել, որ Գալիցիան և վելիչկոնի գործ դրած կրթական և կրօնական հալածանքը հայերի դէմ թէ՛ յանձնաւոր է և թէ կարող է միասակար հետեւանքներ ունենալ:

Գանձակի նահանգապետը, որ վերջերս սկսել էր հասկանալ թէ թէ ո'րքան յանձնաւոր էին հայերի դէմ եղած հալածանքը, անախորժութիւններ ունեցաւ Գալիցիայի հետ և քնաց Պետերսպոլից, ուր, ինչպէս հաղորդում են լրագրները, ընդունել է կայսրից և անշուշտ անձամբ ներկայացրած կը լինի իր առարկութիւնները: Գալիցիան Յունվար 4ին պիտի գնայ Պետերսպոլից: Թէեւ լրագրները հաղորդում են որ «պաշտօնին վերաբերեալ գործերով է գնում», սակայն լուր կայ որ այլեւս չպիտի վերադառնայ և նորա տեղը պիտի նշանակուի մի ուրիշը:

Այս ուրախաւիթ լուրերի վրայ կարելի է աւելացնել և այն, որ վերջերս, զգալի կերպով, կրթական և եկեղեցական հալածանքը հայերի դէմ մեղմացրած է ամեն տեսակէտով:

(*) Լուր մէկ որ իշխան Գալիցիան հրամայել է վելիչկոնին 24 մասեայ ընթացքում հետանալ Թիֆլիզի իսկ:

Չինուորական մեծ պատրաստու-
թիւններ են տեսնում գէպի Հե-
րաթ: Որոշ ոչինչ յայտնի չէ.
սպասում է կարեւոր դիպուած.
ների Միշին Ասիայի կողմը:

Ս. Հայրապետը գեաւ հաւ լի-
միածին է, ոչ մի լուր չկայ ճա-
նապարհորդութեան մասին: Եղի-
շէ վ. Մուրատեանի գիտութիւնն
որ նրան լուր տրուի միտերպուրգ
գնալ և գործը շարունակել՝ պա-
տասխան չկայ: Այդպիսի անփու-
թութիւնները կարող են զղշալի
հետեւեալները ունենալ և Ս. Հայ-
րապետը պարտաւոր է ունենալ
որոշ չափով հեռաւորութիւն, մա-
նաւանդ այժմ, երբ հանգամանք-
ները փոխուած են երեւում և գու-
ցէ կրօնական և կրթական դիմում.
ները շատ աւելի յաջող հետե-
ւանքներ հասցնեն մեզ, քան թէ
կարելի էր սպասել:

1800-1900

— 0 —
Բ
ՌՈՒՄԻՍ

Ալեքսանտր Բ. կայսեր եղբոր-
կան մահովը իշխանութիւնը կան-
ցընէր Ալեքսանտր Գ. ի որ իր նա-
խորդին մահուան պարագաներուն
տպաւորութեան տակ ընտանեակին
իր մտքին մէջ առաջին տեղը յու-
նող հարցը պիտի ըլլար Նիշիլիզա-
մի:

Ալեքսանտր Գ. նախ իր ամբողջ
ուշադրութիւնը դարձուց այդ
կողմը, և տարբեր կերպ չէր կըր-
նոր շարժիլ իր իշխանութիւնը,
կեանքը ու գահը պահելու համար.
հակառակ իրեն և միապետութեան
չուլլը տիրող սարսափին, յաջողե-
ցաւ Նիշիլիզադ և թէ ոչ ջնջիլ
գէթ կառնցնել իր ճամբուն մէջ:

Խրիմի պատերազմին ելքովը
Ռուսիոյ արտաքին աշխարհաւա-
րութեանը համար բացուած նոր
չրջանը, այս կայսեր օրով աւելի
ճարտար դարձաւ մը առաւ.
որով առաւելան պետութիւնը ա-
ռանց պատերազմի նիւթական և
անձնական ծանր զոհողութեանց
ենթարկուելու, սրբիւնաւորուե-
ցաւ միակակ շահեր ձեռք բերե-
լով, ինչ ու մէկ քանի պատե-
րազմներով չէր կրցած ունենալ:

Երեւանի յաղթութիւնովը Պարս-
կաստանի մէջ Ռուսիոյ ձեռք բե-
րած ազդեցիկ դերը զգալի կեր-
պով դորացաւ, միւսնոյն ատեն
Ռուսիա հետզհետէ իր սահմանը
ընդլայնեց կեդրոնական Ասիոյ
մէջ և թուրքաստանը ամբողջովին
իւրացուց: Այս յաջողութիւննե-
րով Մուսկովիւնը գէպի Հիւսիս-
տան տանող ճամբան թէ կը յոր-
դուէր և թէ կապահովուէր:

Ալեքսանտր Գ. կայսեր ժամա-
նակ Եւրոպա քաղաքական կարե-
ւոր յեղաշրջում մը կրած էր.
Պիլմարք իշխանի ստեղծած եր-
բեակ նիւթակցութիւնովը, որուն
շնորհիւ Գերմանիա, Աւստրիա և
իտալիա միանալով զինուորական
ահաւոր ուժի մը ծնունդ տուած
էին: Այսպէսով Գերման մեծ դի-

ւանակոր Ալման կայսրութեան
Ֆրանցո-Ֆերմանական պատերազ-
մով ձեռք բերած խիստ նշանակե-
լի շահերը կապահովէր: Յիւն-
ստի և ամեն անոնց դէմ, որոնք
հաշտ առջը չէին նայեր Գերմա-
նիոյ մեծնալուն:

Անգլիա, Ֆրանսա և Ռուսիա
այս միացեալ զօրութեան դէմ
միա միմեկ միացին: Իսկ Ֆրանսան
ամենէն աւելի մտահոգ վիճակի
մը մէջ էր և լուրջ սպառնալիքի
մը հանդէպ:

Աս նիւթակցութեան իբր հե-
տեւանք հաւանորէն կըստատէր
նոր միութեան մըն ալ յառաջ գա-
լը իբրեւ հակակշիռ երրորդու-
թեան հեղինակութեանը դէմ որ
Եւրոպական հաստատակցութիւ-
նը գտնէ բարոյապէս խախտած
էր:

Ալեքսանտր Գ. գիտցաւ այս
կացութեանն ամեն կերպով օգ-
տուիլ, և Ս. Բելթրապուրի
դահլիճը Եւրոպական քաղաքա-
կանութեան զլխաւոր առանցքնե-
րէն մին եղաւ: Ճիշդ հոս է որ
Չարին քաղաքականութիւնը իր
նրբութեանը և ճարտարութեանը
փայլուն մէկ ապացոյցը տուաւ:

Թէ ինչպէս
Ֆրանսա Գերմանիոյ հետ ունե-
ցած պատերազմէն յետոյ տնհա-
ւատալի արագութեամբ մը կազ-
մակերպուած, զինուորական պա-
կաւելի զօրութիւնով մը և տնտե-
սական բարգաւաճ վիճակի մը շը-
նորհիւ յաջողած էր իր նախկին
դերքը ձեռք բերել: Բայց երբ-
եակ նիւթակցութիւնը Ֆրանսա-
յի Մշօրէն մտածել տալ սկսաւ
իր հեղինակութեանը պահպան-
ման միջոցներուն վրայ: Գաղղիա
իր կացութեանը տէր մնալու հա-
մար միայն զօրեղ բարեկամի մը
ձեռնառութեան պէտք ունէր:

Ռուսիա ընձեռնեց այդ ուշա-
կութիւնը, և փոխաբէն ստացաւ
Ֆրանսայի միջոցները, որոնց
այնչափ պէտք ունէր իր ներքին
կարգ մը ձեռնարկութիւնները գը-
լուի հանելու համար: Այդ վիթ-
խարի գումարներուն շնորհիւ Ան-
գլիայի բերեալ և թուրքաստանի
երկաթուղիի գիծերը սկսան ալ-
հաւաւոր երկիրներուն կեդրոնի
հետ կապուելուն ինչ աստիճանի
օգուտներ ունենալը հարկ չեմ
տեսներ մանրամասնօրէն պարզել:
բացորոշ են:

Ֆրանցո-Ռուս փոխադարձ հա-
մակրանքի արտայայտութիւնները
Ֆրանսայի-Ռուսիայի ցոյցերով րա-
կան, որ վերջ ի վերջոյ պիտի
նուիրագործուէր պաշտօնական
դաշնակցութեամբ մը:

Ալեքսանտր Գ. կայսեր օրով
համապատասխան գաղափարը մեծ
մղում առաւ. այս շարժման գը-
լուի կը կենար կայսեր մտերիմը
և ներքին խորհրդական աւագ
պրօֆուրօր Բոպիէտոնցէի:


Կովկասահայոց դէմ եղած յայտ-
նի հալածանքը այս ատենէն կըս-
կաի արդիւնք համալրական գա-
ղափարին, այդ հալածանքը շատ
սուր կերպարանքով մը երեւան
եկաւ հայ վարժարանները փակ-
ուեցան Ռուս պետութիւնը հա-
յութիւնը պահող հաստատութեան

վրայ ձեռք կը դնէր: Ինչդիր
վերջական լուծում մը չէր գտած
երբ Մակար կաթողիկոսի յան-
կարծակի վախճանումը պահ մը
կասեցուց այդ հարցին ընթացքը,
որ սակայն մօտաւոր ապագայի
մը մէջ աղետաւոր վախճան մը
պիտի ունենար մեզ Հայոց հա-
մար:

Ալեքսանտր Գ. պատմութեան
էջերէն մին ալ հրէից և իսլամ Չէր-
քէներուն դէպքերը կը ներ-
կայացնէ. մեծ թուով իսլամացի-
ներ վտարուեցան Ռուսաստանէն և
այդ սեմական ակամայ գաղթա-
կանութիւնը քանի մը տարի տե-
ւեց: Իսկ Չէրքէները միմիայն
ընդունուեցան Տաճկաստան, որով
Ֆրանսան ժողովուրդի զլխուն
փորձանք մայ աւելցաւ:

Հոս կը վերջանայ Ալեքսանտր
Գ. շրջանը, որ, ինչպէս տեսնեք
խաղաղ և արդիւնաւոր եղաւ:

Ալեքսանտր Գ. ի մահուամբ իշ-
խանութիւնը անցաւ Նիքօլա Բ.
արդի կայսեր:



Նիքօլա Բ. քաղաքականութիւ-
նը իր նախորդին շարունակութիւ-
նէն է և անոր ձեռնարկութեանց
կատարելագործումը:

Նիքօլա Բ. կայսեր ի Բարիդ
և փոխադարձ ֆրանսական հան-
րապետութեան նախագահ Ֆելիքս
Յօսի ի Բելթրապուրի այցելու-
թիւններն նուիրագործեցին այս
երկու աչքերու մէջ եղած միջնե-
ցումը, օրինական դաշնակցու-
թեամբ մը. այս դէպքը եւրոպա-
կան քաղաքակրթութեան նոր ուղ-
ղութիւն մը տալու պատճառ ե-
ղաւ, ուրկից ամենէն աւելի տու-
ածորէնէն մին ալ մենք հայերս ե-
ղանք:

Ռուսիոյ արտաքին աշխարհա-
կալութիւնը նոյն ուղղութեամբ և
ալ աւելի ուժով շարունակեց իր
ընթացքը: Ռուսիա ծայրագոյն
արեւելքի մէջ մեծապէս շահողնե-
րէ մին եղաւ կարեւոր ռազմավա-
յէն Անգլո-սիպերիական գծին ա-
ւարտելովը ալ աւելի մեծ կարեւո-
րութիւն մը պիտի ստանան և
Ռուսիա գերակշիռ դիրք մը պի-
տի կրնայ ունենալ այդ հեռաւոր
երկիրներուն մէջ:

Միեւնոյն ատեն Պարսկաստանի
հետ ծանօթ դաշնագրութեամբը,
որով հոն երկաթուղիներ չիւնելու
իրաւունքը միայն Ռուսիոյ կը
մնայ, և Անգլիոյ տագնապալի
վիճակէն օգտուելով զինուորական
կարեւոր ուժի մը գէպի Աֆղան
սահմանը գրեթէ անարգել յա-
ռաջանալը, ասոնք քաղաքականա-
պէս և նիւթապէս հայոցին շահեր
են Ռուսիոյ համար, զորս ատենց
մեծ զոհողութեանց ձեռք կը բե-
րէ, հակառակ Անգլիոյ իր դա-
րաւոր թշնամին շահերուն, ո-
րուն ոչ նուազ կը ջանայ արգելք
ըլլալ Աֆրիկեան ձեռնարկութեանց
մէջ, ինչպէս հապէշխանի խնդ-

րոյն ժամանակ Մենելիքի իր բա-
րեկամութիւնը տալով Ֆրանսայի
հետ միացած և անընդհատ յու-
գելով եզրպատական խնդիրը:

Նիքօլա Բ. կառավարութեան
ներքին անօրինութիւնները զլխա-
ւորաբար եղան նախ հայ վարժա-
րաններու վերջնականապէս զրաւ-
ման խնդիրը սրուն մէջ կայրելու
դեր ունեցած է Ռուս հանրային
կրթութեան նախարար հայ ազգի
կոմս Գելեանօֆ: Այսօր ալլաւ
մերկապարանոց եղած է Ռուս պե-
տութեան գէպի հայ տարրը ու-
նեցած նկատումները և քաղաքա-
կան ուղղութիւնը որ ծագում ա-
ռած էր Աշտարակիցի կաթողի-
կոսի և Նիքօլա Ա. կայսեր օրով:
Արեւելքի քրիստոնէից այդ ամե-
նաքրիստոնեայ պաշտպանը քրիս-
տոնեայ Տաճկահայաստանը անխը-
խադութեանց թաղու մը դար-
ձած ատեն, իր ահաւոր ձեռքը
կերկնցնէ ազգային այնպիսի հա-
տատութիւն մը զրաւելու, որ
հայութիւնը կը պատրաստուի:

Ֆրանսական խնդիր մ'ալ ու-
նինք: Ռուս վարչութիւնը այդ
հանդարտ ժողովուրդին դարեւոր
առանձնանորհումներէն կարեւոր
մաս մը կապտեց. այս առթիւ
բարձրացած ազերսի և բողոքնե-
րու ձայները չըլեց Նիքօլա Բ.
որ սակայն ինքն ալ իր նախորդ-
ներուն նման Ֆրանսական Դըք-
սութեան իրաւունքները յարգելու
երդումը ըրած էր: Ռուս վարչու-
թիւնը հիմէ մէկ ձեռքով այս հա-
րուածները կուտար հայոց և Ֆին-
լանտացոյ. նոյն ատեն տարիներէ
ի վեր աղատութիւնը կորնցուցած
Բելթրապուրիներու կը թոյլատրե-
րենց լեզուին կիրառումը, զիրար
հակասող երկու տնօրէնութիւններ
և նոյն իսկ այդ հակասութեանց
մէջն է Ռուս վարչութեան խորս.
գիտութիւնը:

Նիքօլա Բ. կայսրը խաղաղու-
թեան դեպքանախորհուրդի մը
գումարմանը փափաքեցաւ. միւս-
նոյն ատեն իր բանակները հրա-
ման կըստանային աստ անդ յա-
ռաջանալու: Ռուս կայսեր այս
յոյժ մարդասիրական գաղափարն
այն ատեն միայն կարելի է չօշա-
փել ի բարիք մը սպասել աշխարհի
համար երբ մեծ Պետութիւնք ի-
րենց գործը լմնցնեն և կշտանան:

Այսօր Ռուսիոյ մէջ Ուսանալա-
կան խլրտում մըն ալ կայ, որ
Ռուս միապետութեան և ազատ
գաղափարի մէջ առաջ եկած պայ-
քարի մը սկիզբն է, որ եթէ ոչ
այսօրուան գէթ տպագրային հա-
մար ներքին լուրջ խնդիր մը դա-
նալու բնութիւնը ունի:

Ռուսիա ահա այսպէս բոլորեց
վերջի հարիւր տարին. այսօր ան-
ցեալ դարու սկիզբին ունեցած վի-
ճակէն ալ աւելի մեծ, զօրեղ և
հեղինակաւոր կը մտնէ 20րդ դա-
րը: Բայց հակառակ իր յարաճուն
մեծութեանը ներքնապէս ալ ու-
նեցաւ մէկ քանի սեւ կէտեր որոնք

կը մնան և եթէ ժամանակին չը գիտնայ զանոնք զարմանել զա-
յուս պահանջներուն համեմատ
իրեն մտահոգ ապագայ մը պիտի
պատրաստեն :

(Շարունակելի)

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

— 0 —

Եւրոպայի քնակիչները

Գերմանացի բրոֆէսէօր մը՝ Պ.
Սուպուս վիշին օրերս Եւրոպայի
ժողովրդոց վրայ աշխարհամար մը
հրատարակած է Ըստ այդ հեղի-
նակին Եւրոպայի այժմեան բոլոր
բնակիչներն, կըլին թուով 380 մի-
լիոն, մինչ 1870ին ամբողջ ժողո-
վորդը այդ թուէն 79 միլիոն պա-
կաս էր : Եւրոպայի տարին մօտ 3
միլիոն կաւելնայ եղբւր Եւրոպայի
ժողովուրդը :

Խոտովեան տեսակետով 1 քա-
ռակուսի քիւմիւնքի մէջ 39 բնակիչ
կայ, իսկ եթէ մասնաւոր խոտ-
ովեան գանք, Պիլճիգա 224 բը-
նակիչ ունի մէկ քառակուսի քիւմ-
մէթրի համար, Ստորին Նահանգ-
ներն՝ 152, Բրիտանական կղզի-
ներն՝ 127, Իտալիա՝ 144, Գեր-
մանիոյ կայսրութիւնը 97, Զուի-
ցերիա՝ 76, Ֆրանսա 74, Տանը-
ւարքա 58 և այլն, իսկ Ռուսիա՝
31, Շուէտ 11, և Նորվեգիա մի-
այն 6 :

Յիստոյ հաշուելով այն քաղաք-
ներն որոնք առնուազն 100,000 բը-
նակիչ ունին բրոֆ. Սուպուս,
Եւրոպայի մէջ կը գտնէ, Գերմա-
նիոյ մէջ 29 քաղաք (որք առնու-
ազն հարիւր հազար բնակիչ ու-
նին, Աստորյ Հանգարիոյ մէջ
6, Պիլճիոյ մէջ՝ 5, Սպանիա՝ 6
Ֆրանսա՝ 12, Յունաստան՝ 4, Բը-
րիտանական կղզիներն՝ 34, Իտա-
լիա՝ 12, Նորվեգիա՝ 4, Ստորին
Նահանգներն՝ 3, Փորթուգալ՝ 2,
Ռումանիա՝ 4, Ռուսիա՝ 16, Շը-
ւէտ՝ 2, Զուիցիերիա, 4 և Թուր-
քիա՝ 4 :

Ուրիշ ցուցակ մալ մեզ կիմա-
ցնէ թէ Գերմանիոյ մէջ կան 57
քաղաքներ, որոնք 50000 բընա-
կիչէ աւելի ժողովուրդ ունին, Ա-
ւստրիոյ մէջ՝ 18 քաղաքներ, Պիլ-
ճիոյ մէջ 10, Ի Սպանիա՝ 18, Ի
Ֆրանսա՝ 34, Ի Յունաստան 3,
Բրիտանական կղզեաց մէջ 67,
Իտալիա՝ 27, Ի Նորվեգիա՝ 2,
Ստորին Նահանգաց մէջ՝ 8, Ի Փոր-
թուգալ՝ 2, Ի Ռումանիա՝ 4, Ի
Ռուսաստան՝ 50, Ի Սերպիա՝ 4,
Ի Շուէտ 3, Ի Զուիցիերիա 4 : Ու-
րիշ Եւրոպայի մէջ կան 308 քա-
ղաքներ որոնք ամէնքը միասին
56 և 1/4 բնակիչ ունին, այսին-
քով բոլոր բնակչութեանց 15
0/0-ը :

Ինչպէս նշմարել կուտայ հիշի-
նակը, այս դարու կէսէն յետոյ
քաղաքներու բնակչաց թիւը զգա-
լի կերպով աւելցեր է, և ատոր
պատճառը ոչ թէ ծնունդներու
բազմանալն է, այլ դաշտային բը-

նակչաց դէպի քաղաք գաղթելը :
1870 և մինչև 1897 — գիցուք 25
տարիէն մի քիչ աւելի — Եւրոպայի
մէջ 50000 բնակչօք քաղաքներու
թիւը շարունակէ մեծցեր է, 171էն
308ի բարձրանալով : Այս քաղաք-
ներու բոլոր բնակչաց թիւը կը
ներկայացնէ Եւրոպայի ամբողջ
ժողովրդին 0/0 15ը մինչ 1870
թուականին միայն 0/0 9ը կը ներ-
կայացնէր :

* * *

Տեղապահն տը վիլյուա-Մարեօյ

Այս պահուս շատ կը խօսին
Ֆրանսացի Տիգապահ Գնդապետ
տը վիլյուա Մարեօյի վրայ, որ
Թրանսպարի պատերազմին մէջ
ժաւպէր զօրավարին օգնական էր :
զուցէ հետաքրքրութենէ զուրկ
չը լինիր գիտնալ թէ ինչ է եղեր
այդ անձնաւորութեան զինուա-
կան անցնալը Ֆրանսայի մէջ :

Պր. տը վիլյուա Մարեօյ 1870
— 71ին պարզ տեղապահ մըն էր և
հռչակ ստացաւ վիէն-վէ-Պը-
լուս պատերազմին մէջ :

Գերմանացիք այդ տեղւոյն աի-
րեր էին : 1871 յունվար 28ին,
զօրավարն փոռնէ փորձեց թշնա-
մին այդ տեղէն հեռացնել և քա-
ղաքն ազատել, սակայն Գերմանա-
ցիք առանց տկարանալու կը դի-
մանային Ֆրանսացուց յարձակ-
ման : Երեկոյեան ժամը չորսն էր,
գրութիւնը կը լրջաւորուէր և
բանար : այն ատեն զօրավարն
փորսէ հրամայեց թշնամուին վը-
րայ վազել սուխապուրդ, վտանգը
շատ մեծ էր, տրուած հրամանը
զործադրել անկարելի կը թուէր :

Տեղապահը սակայն իր մարդ-
զուին անցնելով յախուռն կեր-
պով յարձակեցաւ թշնամեաց վը-
րայ, Գերմանացիք ինքզինքնին կը
պաշտպանէին : Քիչ անցաւ պա-
տերազմն սուխապուրդ մեծամարտի մը
փոխուած էր : վիլյուա Մարեօյ
առաջինն թշնամեաց բանաժ տեղի
մտաւ և ընդունեցաւ իր երկու ու-
րունքներուն մէջ խոշոր աւազ մը :
բայց հոն կեցաւ մինչև որ Գեր-
մանացիք բոլորովին յաղթուած
սկսան փախչել, թշնամեաց տե-
ղապահը ինքն իր տոյ միայն տե-
ղապահն հիւանդանոց մը տարին
դարմանելու :

Պատերազմի դաշտին վրայ տե-
ղապահն տը վիլյուա Մարեօյ
գնդապետ անուանուելով, ստա-
ցաւ Պատույ Լէգէօնի խաչը :

Պր. Գրիգոր Աղակեանի մահը

Հաստատ աղբիւրներէ միմանանձ
թէ Պր. Գրիգոր Աղակեան՝ եր-
րորդ տարուան ուսանող բժշկու-
թեան մեռած գտնուած է Պատե-
նի դքսութեան մէջ : Այս պարունը
Բարիկ ուսանող էր. նոր տարուայ
նախնորդ օրն կը մեկնէ իր տունէն
և մէկ մալ չերեւար. քանի մը օ-
րէն նամակ կը գրէ իր դուստրու-
նին ի Բարիկ թէ ինքն Գերմանիոյ
կը գտնուի ու քանի մը օրէն պի-
տի վերադառնայ ի Բարիկ : Յուն-

25ին իր դուստրու ուստիկանու-
թեան կիմանայ թէ նա մեռած է
Պատենի դքսութեան մէջ :

Ոմանք կըսեն թէ անտառի մը
մէջ գտած են իր դիակը ոմանք
ալ իջեալն մը մէջ. ոմանք անձ-
ասպանութիւն մը կը տեսնեն հոն,
ոմանք ալ ոճիր մը : Երիտասար-
դին վրայ ոչինչ չէ գտնուէր բացի
իւր ուսանողական քարտէն որուն
վրայ գրուած է եղբւր Գրիգոր Ա-
ղակեան : ուսանող բժշկութեան ի
Բարիկ : Գերման ուստիկանութիւ-
նը տեղեկութիւն կուտայ Ֆրանսա
կան ուստիկանութեան և այսպէս
այդ ահուելի լուրը կը տարածուի
Բարիկի ուսանողութեան մէջ որ
մեծ ցաւ կը պատճառէ ամենուն
վրաս իր այդ երիտասարդը ամեն.
քին համակրելի և սիրելի ուսանող
մէ եղած : Առ այժմ ասպաւ, վա-
սնդի մանրամասնութիւններ զեռ
կը պակսին :

Ա. Սէսի և Մ. Դաւիթ-Բեկ

ԼՐԱՔԱՂ

Պոլսոյ կրօնական ժողովը նկա-
տողութեան առաւ Շուվարի ազ-
գայնոց կողմէ մատուցուած զիւր
մը, որով տեղւոյն Տ. Խորէն եւ
Տ. Յովհան քահանայներուն միջև
ժամանակէ մը ի վեր առաջնու-
թեան մասին ծագած զգուշու-
թեան վրայ տեղեկութիւններ կը
հաղորդուէր : Արդէն Պատրիարք
ժամուցած էր ինչեալ քահանանե-
րուն թէ ձեռնադրութեան կարգը
կը պահուի միշտ եկեղեցական դա-
ստան մէջ. այսինքն Տ. Խորէն հայր
աւելի առաջ քահանայացած լինե-
լով աւագերեցի իրաւունքը անորն
է : Պա շատ որոշ էր, այնպէս որ
խնդիր հանել չէր արժեր. միեւ-
նոյն ատեն Պատրիարք պատասխա-
նելն ալ զգուշութեան առջեւն ա-
ռած էր : Բայց զարմանօք այս
անգամ Պոլսոյ թերթերուն մէջ կը
կարդանք թէ խել մը ազգայինք
կրկին Պատրիարքարանի դիմելով
այդ խնդիրը նորէն արժարձիկ ե-
լած են. մենք այդպիսի ընթացք
մը ցաւալի կը գտնենք և կըսա-
սենք որ Տ. Յովհան հայր խոր-
հուրդ տայ այնպիսիներուն որ «քա-
հանայական խնդիր» քողին տակ
անհատական կիրքերու զոհացում
տալ չի ճգնին :

— Կարնոյ Առաջն. Տիգապահ Տ.
Զաւէն վարդապետ տեղեկութիւն
տուած է կրօն. ժողովոյ թէ հի-
ւանդ հոմանի կնոջ մը Ս. հաղոր-
դութիւն չտալ և եկեղեցական թա-
ղումէ զրկել հրամայած է քահա-
նաներուն : Ժողովը զոհ մնացած
է Տիգապահին այդ կարգադրու-
թեան : Կրօն. ժողովին զահու-
թիւնը սս ընդհանուր նշանակու-
թիւնը ունի թէ՛ սվ որ տպօրինի
կը կենսակցի եկեղեցական խորհր-
դաց մասնակցելու իրաւունքէն կը
զրկուի :

— Պոլսոյ ազգ. հիւանդանոցին
ինպատա նուագահանդէս մը կա-
տարելու համար Պատրիարքը ար-
տօնութիւն խնդրած է ներքին
գործոց նախարարութեան : Հիւան-
դանոցի հոգաբարձութիւնն կարգ
մը ելաժշտասէր և բարեհէր երկ-

սեռ ազգայնոց հրաւեր զրկած է
նոյն նուագահանդէսին կարգադր-
ութեանց համար :

— Ս. Յակովբայ որբանոցին մէջ
կրպակներ ու տաղաւարներ կը
չինուին, որոնց մէջ 40ի չափ որ-
բեր պիտի սովորին կամ առաջ տա-
նին կօշկակարութիւնը, դերձակու-
թիւնը և ուստանակութիւնը : Հի-
ւանդանոցին պէտք եղած կօշիկ-
ները և հագուստները այս արհես-
տանոցին մէջ կը շինուին արդէն,
և դուրսի աղքատ տղաքներու հա-
մար եղած կօշիկի ապաւրանքները
ևս Հիւանդանոցի որբերը կը կու-
տարեն : Արհեստանոցի այս լաւ
գրութիւնը զաւաններու որբանոց-
ներուն ալ յանձնարարուած է :

— Որբանոցներու սահմանուած
յնվր. և փետր. ամսականներն ան-
ցեալ օր Պատրիարքարանէն զըր-
կուած են :

— Քաղաքական ժողովոյ կողմէ
Ուսումնական խորհրդոյ ուղղուած
պաշտօնագիր մը կը ծանուցանէ
Ազգ. վարչութեան որոշումը վար-
ժապետանոցի մը հաստատմանը
համար :

— Մանչեսթրի ազգայնոց նը-
պաստով կիպրոսի որբանոցին մէջ
պատասպարուած որբերուն վրայ
առաւ որբ ևս պիտի աւելցուի,
դարձեալ ինչեալ ազգայնոց նպաս-
տով :

— Ռուսիայում կատարուած ազգա-
համարի թուանշաններէ առաջին գու-
մարումից երեւում է, որ ամբողջ կայ-
սրութեան բնակչաց թիւը հասնում է
129, 211, 000. ի (արանցից 64, 616, 287
այր և 64, 594, 833 կին) : 1885-ին
Ռուսիայի բնակիչների թիւը եղել է
108, 819, 324 հոգի :

Այս և այն քաղաքների ցուցակը
որոնք 100, 000-ից աւելի բնակիչ ու-
նին.

Ս. Պետերբուրգ	1, 267, 023	բնա.
Մոսկովա	988, 610	»
Վարչապա	614, 751	»
Օդեսա	404, 651	»
Րիգա	588, 943	»
Խարկով	170, 682	»
Թիֆլիզ	159, 863	»
Տաշկենդ	156, 506	»
Սարատով	133, 116	»
Ղազան	131, 508	»
Եկատերինոսլավ	121, 216	»
Ռոստով Դոնի վրայ	119, 889	»
Աստարխան	113, 075	»
Բաքու	112, 253	»
Տուլա	111, 048	»
Քիլիսե	108-506	»

«ԻՐԱՒՈՒՆՔ»-Ի ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Տ. Յ. Բ. Պորիսովկրատ. — Ստացած
ենք ձեր բաժնեգրիները : Օրացոյցները
սպառած են, բայց քանի մը օրէն նո-
րիւ կը հասնին. ուստի վստահ եղէք
որ մօտ օրերու լմէջ կը զրկուին թէ՛
Ձեզ եւ թէ ուրիշներու, որոնք իրենց
ներկայ տարւոյ բաժնեգրիներ ամբողջա-
պէս վճարած են :

— Տ. Լ. Ռուսուդ. — Ձեր եւ ու-
րիշ բաժնեգրի ընթերցողաց խնդրա-
նաց համաձայն յառաջիկայ թուով պի-
տի արտատպենք Տ. Զօպանեանի Իմ
Բաժնաւորներու վերնագրով յորդուածը
ու Ձեր զիտողութիւնը :

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ ՄՈՒՐՉԱՆԸ

ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՆԳ. ՏԻԳՐԱՆ ՄԱՆԱՎԱՆԻ

— 0 —

Նոր լոյս տեսած այս թատեր-
գութիւնը ստացած ենք :
Գին 4 ֆրանք. կեդրոնատեղին
է Օնիկ Բարսեղեան Արեւելեան
տպարան : Վառնա

բորտօն ալ թ ընտ ալ ը հմասընը էմր
ի թ ի իշ տիր :

— «Նայէ Յրայէ Բրէսէ» Ս. Բէ
Ժերսպուրկտան ալտըրը ժալիւմ
ժա նազարէն, Ա.Ֆզանիստան հու
ռուտընա կէօնտէրիւն Մըսըր սս
էրէրէրին հարէքեալժը թէէխիր օ
ընմըլ տըր, վէ Ա.Ֆզան հիքիւմէ
ժի տէ քէնտի հուռուտընտաքի
դուէվէի սսքէրիլէսի չօղալժմըլ
րըր :

Սթանպոլտան «Թալվ» ինկլիշ
կադեթառնս վերելէն պիր մալիւ
թա նազարէն պիր թաղըմ Ժէօն
Թիւրքլէրին ճննչպի սէֆարէթլէ-
րինէ պիրէր թապրիր վերելճէք
լէ Սուլթան իշիթմիշ օլմաղ
օլմաղլէ, ումում Սթանպոլ սէֆա-
րէթլէրի բօլիսլէր թարաֆրտան

— Օսմանիւր օրորուսընտա պալու-
ան ֆրանսալը Պէրլիորէ բաշա
էնի պիր թիւֆէնկ իճատ իթմիշ
լուպ, պուհըն նիւմիւնէսի իէ պէ
ապէրինտէ պիրտէ բաբօրթ, ԸԼ-
լանպօռ ինկիլիզ սէֆարէթի Ա-
թաշէ միրլիթէրի թարաֆընտան
օնտրա հարպիյէ նէվարէթինէ
էօտէրիլմիշ տիր:

$$(\text{---}) \circ (\text{---})$$

— Թրանսպարա հիւքում թիւնն
արիզ մաստհաթ կիւղարը Տօք.
էյտսըն ըէսմի իւննընա նազարէն
ուհարէպէնին իպթիտասընտան
ու կիւնէ գատար Պօէրլէրին⁸ թէ
Ֆիյաթը ումըշ տըր 213 քիշի
օլէն, 1000 քիշի հարաւը վէ 200
քիշիտէ էսիր. ումումէն 1412 քի
հալպուքի ինկիրիլլէրին թէլէ
իյաթը 10000 է հազըն տըր :

ՊՈԼԿԱՐ ՎԱՐՍԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՐԱՆԱՍՈՐԵՍ		
Ա. ՊԱՐԿԵՆԻՆ Է	300,000	ՖԲ. ՈՍԿ.
50,000	ստոման հրապարակ հանուած	
հն, որոնց	25,000	գլխով շահին հե-
սահեաւ կերպով,	1900	սարսոյ՝
Յուշմար 4ին	1500	թիւեր 101750
Ֆեարվար 3ին	1500	» 143000
Մարտ 6-7ին	2000	» 249400
Ապրիլ 4-5ին	2000	» 318750
» 25-26ին	2000	» 375300
Մայիս 17 յուն. 7	1600	» 3352800

[illegible]

Դրքեր, ատորակներ, հրախրազրելի, ռուսալիներ եւալն կը սպագրուին ա-
նհանգիլ լաւատաշելի գներով ու գոհա-
ւուցիչ պայմաններով: Ֆրանսիերն,
ուսնաքէն եւ պուլկարիւրն փաթիլի
ործեր եւս կը պատարաստուին:
Օտար երկիրներէ եւ ուրիշ քաղաք-
երէ եկած լանձաւարաւթիւրք փու-
թով եւ ճշիւր կը գործադրուին:

Լրագիրը ազգային, դրական եւ քաղաքական, կը հրատարակուի շաբաթը մէկ անգամ. արտասահմանի համար տաւելան 10 ֆրանք: Բաժանորդագրուիլ ապահովողը դիմեն հետեւեալ հասցէին.

American Hai publishing Co
09 . 23d St, New York City

4 1/2 5

ՄՐՄՈՒՆԶ ՀԱՅԿԱԿԱՆ

Կը պարունակէ այսօր ժողովուրդի ամեն դասակարգէ երգուող Տին և նոր գրեթէ բոլոր երգերը՝ Կը ճախտի ԻՐԱՆԻՆԻՔԻ խմբագրատունը .

ԳԻՆ 1 ՖՐԱՆԺ

Отговорникъ Н. Драгулевъ
Печ „Взаимность“ — Варна